



Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ առօրեայ օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ. Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Դիւրութիւն. այցելուները համար.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կառավարական կարգադրութիւն. Արձագանքներ. Նամակ Նոր-Բայազէտի. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Լոյսեր. Գանձակ արհեստների մասին:

ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թիֆլիս քաղաքը պարտաւորութիւններ ունի դէպի իր հիւրերը: Առաջիկայ ցուցահանդէսի ժամանակ կը գտնուին զանազան տեղերից այցելուներ թէ ցուցահանդէսը տեսնելու և թէ ցուցահանդէսի ժամանակ եղած ժողովներին մասնակից: Բազմաթիւ պէտք է հոգալ, որ այդ անձինք յարմարութիւններ ունենան քաղաքում ապրելու առանց մեծ ծախքերի և դժուարութիւնների:

Ուրիշ տեղերում նախօրոք միջոցներ են ձեռք առնվում դիւրութիւններ ընծայելու քաղաքի հիւրերին, որոնք մէջ շատ կան այնպիսիները, որոնք կարող են միայն համեստ ծախքեր անել և որոնք համար փոքրիկ ծախքերն էլ ծանրութիւն են պատճառում նրանց տարեկան բիւջէին: Այդ կարգին են պատկանում ուսուցիչները, գրական գործողները, ուսանողները, դիւրութեան մշակները և այլն:

Այլ ևս առաջ ունենալով, որ հիւրանոցները հանդէսների ժամանակ լինեն ևս լինում ծանապարհորդներով և նոր եկողներ իր համար բնակարան գտնվում է մեծ դժուարութեամբ, արտասահմանում օգնութեան են հասնում մասնաւոր տնտեսները և սենեակներ են ազատում ցանկացողների համար էօան գներով: Այն անձինք, որոնք կարող են ժամանակաւորապէս աղմկել և մի քանի շաբաթվայ ընթացքում մի երկու սենեակ տալ քաղաքի հիւրերին, յայտնում են այդ մասին քաղաքային վարչութեան կամ ցուցահանդէսի գրասենեակին: Այդ ձևով վարկից օրինակ խարկով 1887 թուին, երբ այնտեղ բացվում էր համառուսական ցուցահանդէս և այդպիսով մեծ օգնութիւն հասցրեց ցուցահանդէս եկողներին:

Այս կարեւոր կէտի վրա պէտք է ա-

ռանձին ուշադրութիւն դարձնեն թէ Թիֆլիսի քաղաքապետը և թէ ցուցահանդէսի վարչութիւնը և միասին մշակեն մի ծրագիր՝ աւելացնելու բնակարանների թիւը ցուցահանդէս այցելողների համար: Մենք հաւատացած ենք, որ քաղաքի բնակիչների մէջ շատերը կը գտնվեն, որոնք կը համաձայնեն իւրաքանչիւրը մի երկու անձի իրանց բնակարանում տեղաւորել համեստ գներով և այդպիսով եւ կա՞նք այնուհետ հիւրերին ազատել հիւրանոցների կամայական գներից և առհասարակ բնակարան չը գտնելու սպառնալիքից: Քաղաքը պէտք է անտես չաւանդի ներկայ հանգամանքը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐՁԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Ներքին գործերի մինիստրը շրջաբերականով առաջարկել է նահանգապետներին՝ բարեգործական նպատակով տրվող թատրոնական ներկայացումների, կոնցերտների և երեկոյների թոյլտուութիւն տալիս՝ նկատի ունենալ հետեւեալ կանոնները:

1) Նախ քան հրապարակական թատրոնական ներկայացումների, կոնցերտների, դասախօսութիւնների և ուրիշ ժողովների, ինչպէս նաեւ երեկոյների (վճարով) թոյլտուութիւն տալը պէտք է հաստատ իմանալ, թէ ինչ իսկական նպատակներ ունեն նրանք:

2) Հրապարակական թատրոններին և ժողովներին ինչ տեսակի բարեգործական նպատակով էլ լինեն նրանք, թոյլտուութիւն տալիս պէտք է զգուշանալ, որ թոյլտուութիւն տալը պէտք է համաձայնութիւն կը տան նպատակի, բայց ընդհանուր օրէնքներին և կարգադրութիւններին, նաեւ հետեւեալ կանոններին: ա) Թոյլտուութիւն է մտնել բարեգործական նպատակով սարքվող հասարակական զուարճութիւնների և ժողովների տեղը միմիայն տալով տոմսակներով, որոնք վրա նշանակված է գինը և որոնք ունեն կտրոններ՝ վերահսկողութեան համար: Մուտքի բոլոր տոմսակները, ինչպէս նաեւ աֆիշները և պրոգրամները վաճառումը, պիտի կատարվի վաղօրոք ցոյց տուած տեղերում, այն յատուկ անձի հրահրութեամբ, որ նշանակվում է տեղական նահանգական իշխանութեան կողմից: Տնէտուած անձի աշխատի տոմսակներ, աֆիշներ և ճանապարհը կը վերջանայ... և օակայն—հետեւ է...

Եւ դեռ երկար ժամանակ նաւում էինք մենք թանաքի պէս սեւ ու մուգ գետով: Զորք ու ժայռեր դուրս էին սահում առաջնորդ, գալիս էին մեր վրա և հեռանում էին, յետ ընկնելով և կորչելով, կարծես, անհուն հեռաւորութեան մէջ: Իսկ լոյսը չարունակ ցցված էր առաջնորդի և փայլելով էր ու հրապուրում, դարձնելով այնպէս մօտիկ և դարձնելով այնպէս հեռու...

Ես յաճախ մտաբերում եմ այժմ ևս այդ ապագայում լեռների ստուերի մէջ ընկնող մութ ժամը, երբ այդ կենդանի լոյսը, Շատ լոյսեր, դրանից առաջ էլ, յետոյ էլ, հրապուրել են իրանց մօտիկութեամբ ոչ միայն ինձ, այլ և շատ շատերին: Բայց կենքը հոտում է դարձնելով նոյն մուգ ամպերի մէջ, իսկ լոյսերը դեռ հեռու են: Եւ դարձնելով պէտք է զօռ տալ թիւերին...

Բայց այնուամենայնիւ... այնուամենայնիւ առջեւում՝ մեզ լոյս է սպասում:

Թարգմ. Տ. Յ.

ԳԱՆՁԱԿԻ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տնտեսական-արդիւնաբերական կենքի մէջ տեղի ունեցող անխուսափելի մրցումը մեր փոքրիկ, աղքատ քաղաքումն էլ սուս ու փուս,

պրօգրամներ կամ բաժանել նրանց կողմնակի անձանց՝ վաճառելու համար՝ արգելվում է. բ) ա կետում նշանակված անձի հսկողութեամբ նոյնպէս վճարվում են, ստացած մուտքից, զուարճութեան կամ ժողովի համար արած ծախսերը և նոյն անձն էլ յետոյ ներկայացնում է նահանգապետին բոլոր ծախսերի վաւերացումը: գ) ամբողջ զուտ արդիւնքը կարգադրիչները յանձնում են հսկող անձին, որ, առանց պատշաճաւոր ստորագրութիւնների երեկոյի կազմողներին, ներկայացնում է զուարճար նահանգապետին՝ ըստ պատկանելոյն ուղարկելու համար. եւ եթէ զուարճութիւնը կամ ժողովը թոյլատրված է եղել յօգուտ որ եւ է զարգացական հիմնարկութեան մէջ սովորողներին, ստացված զուարճար նահանգապետը յանձնում է անմիջապէս այդ հիմնարկութեան գլխավորին:

3) Մասնաւորապէս հրապարակական կօնցերտներ, ներկայացումներ և ուրիշ հրապարակական երեկոյներ և ժողովներ կազմելը, համաձայն մինիստրների կօմիտեի 1887 թվականի 26-ին Բարձրագոյն հաստատված որոշման, չէ կարելի թոյլատրել ուսանողներին, աշակերտներին և առհասարակ դպրոցական հիմնարկութիւններին մէջ սովորողներին:

4) Միւս բոլոր այն անձանց, որոնք կամենում են օգնել չուսուող աշակերտներին, միմիստրների կօմիտեին նոյն որոշման համաձայն, թոյլտուութիւն տալ սարքելու հրապարակական զուարճութիւններ և ժողովներ միայն այն դէպքում, երբ համաձայնութիւն կը ստացվի այդ զարգացական հիմնարկութեան վարչութիւնից, որի աշակերտների օգնութիւն է յատկացրված մուտքը, իսկ եթէ այս մուտքը պէտք է յատկացնել զանազան հիմնարկութիւններին աշակերտներին, այս դէպքում թոյլտուութիւն տրվում է ուսումնարանական շրջանի հոգաբարձուի համաձայնութեամբ:

5) Ամեն մի ժողովում, որ տեղի պիտի ունենայ սահմանված կարգով հաստատված ծրագրով, չը պէտք է թոյլ առն ոչինչ ճաշեր, ոչ էլ ընթերցանութիւններ, որոնք չեն մտած ծրագրի մէջ, այլ և ոչինչ դրամական ժողովարարութիւններ:

ԱՐՁԱՅԱՆՔՆԵՐ

LX

Մի խաչ էլ աւելացաւ ոռոսաց զրական հանգստարանում, ուր կան գերեզմաններ, որոնք պատկանում են ոչ միայն ոռոս ժողովրդին, այլ և ամբողջ մարդկութեան:

առանց աղմուկի, կատարում է իր գերը Շատ անկախ արհեստաւորներ՝ անկարող լինելով իրանց գործը ինքնուրոյնաբար շարունակել, անկարող լինելով մրցութեան առաջարկեցում դիմադրել աւելի մեծ և աւելի շատ փող ունեցող արհեստաւորներին՝ թողնում են իրանց անկախ պարագայումը և մտնում մեծ արհեստանոցներ օրավարձով կամ կտրով և կալ այլ ևս այլ պայմաններով: Գիտութիւնը, արհեստի մէջ ունեցած հմտութիւնը այնքան նշանակութիւն չունի, որքան փողը:

Տեսնում է՞ շատ աւելի լաւ գիտող և շատ աւելի հմուտ արհեստաւոր յանձն է առնում իրանից աւելի քիչ գիտող արհեստաւորը վարձվել տարեկան թէկուզ 300—400 ռուբլով: Այս երեկոյի լիաւորապէս նկատվում է այն արհեստների մէջ, որոնց տարածումը կապված է ժամանակակից կենքի, ներս մտնող կուլտուրայի և քաղաքակրթութեան հետ: Կան մի շարք արհեստներ, որոնք հեռանկար աւելի զարգանում, առաջադիմում և արդիւնաւոր են դառնում, որոնք արտադրութիւնը անհրաժեշտ է շեղ ապրող, մօղայով շարժվող, իսկ ևս գեղեցիկ հագնվող և զարդարանք օրնող քաղաքաւորների համար:

Մօտիկ անցնելով ու շրջում էր ասիական կոպիտ ոտնամանով՝ այժմ կարիք է զգում ևս արօպական նուր կօշիկի. ու ըստականանում էր մի զոյգ կօշիկով՝ զուսուարթեան հետ, տեսած լինելու համար այժմ կարիք է զգում

Համալսարանային տաղանդ չէր Մաչաւտ, որ օգոստոսի 13-ին կարճատեւ հիւանդութիւնից լիտոյ հրաժեշտ տուց այս կենանքի գեղածիծաղ եւայտայում, սակայն ոռոսահայ ինտելիգենտների մէջ շատերը կան, որոնց սիրտը սնունդ է առել նրա գրուածքներից:

Ռուսահայ ինտելիգենտների այն սերունդը, որ գործում է այժմ մեր հասարակութեան մէջ, գրում է մեր ժողովրդի համար, կամ թէ հին իրենց մոռացած անձնատուր է եղել կենանքի պղտոր հոսանքին, մի ժամանակ, սրանից տասը քսան տարի առաջ, կարգում էր անյայտ ոռոս ժողովրդաւէրների, նա րօգնի կն երի, գերուածքները, որոնց մէջ վերջին տեղը չէին բռնում հանգուցեալի փոքրիկ, կոկիկ պատկերներն ու պատմաւածքները, որոնք միշտ տօգրված էին լինում համակրելի գաղափարով ու գրված՝ մեծ, թէպէտեւ փոքր ինչ բնագրութիւն, ոգեւորութեամբ:

Ութսունական թուականների վերջում Մօսկվայի գրականական հանդէսներում և ուսանողական երեկոյներում յաճախ կարելի էր տեսնել հանգուցեալին, որին միշտ համակրութեամբ էր վերաբերվում գաղափարական երիտասարդութիւնը:

Սակայն ժամանակը փոխվում է, մենք էլ՝ նրա հետ: Ռուս գաղափարական երիտասարդութիւնը հեռանալէ կարծէք օղբ ցնդեց, նրա տեղը բռնեց զուարճամոլ, եսական և կարրիէրիստ ուսանողների մի ամբողջ, իսկ երբ բարոյական ծանր երազը, կօշմարդ անցաւ ևս ոռոս երիտասարդութիւնը նորից ապացուցեց, որ զինդանի է Աստուած և կենդանի է մարդկային հոգին: Մաչաւտ ևս իր գաղափարական քարոզչները միացրին չիթիված, շուարած: Կարծէք՝ գետինը դուրս էր պրծնում էր նրանց ոտների տակից: Լավում էին ինչ որ նոր խօսքեր, նոր ձայներ: Երիտասարդութիւնը ըսկեւ էր նորից աղօթել իդէալների առաւօտուն, բայց նրա աղօթարանը կարծէք փոխվել էր:

Իրանց, քարոզիչների մէջ էլ ինչ որ փոփոխութիւն էր կատարվել: Զինչ որ այն էր փրկութեան իսկական ճանապարհը, որ իրանք մասնացրեց էին անուս այնքան տարիներ: Հապա ինչու իրանք կարծես մտել էին մի անանցիկ, որտեղից ելք չը կար...

Եւ նարօդիները հեռանալէ իրան գրական ապարէզից, կամ, յամենայն դէպս, զրկվեցին եռանդից: Ամենատաղանդաւորը, ամենախորը և ամենատաղանդը նրանց մէջ, Գլեբ Ուսպենսկի բժշկվում է հոգեկան հիւանդութիւնից: Զյա-

2—3 զոյգի. ու ամառ-ձմեռ մի և նոյն էր հագնում՝ այսօր ամառվայ կօշիկ ունենալու առանձին պահանջ է զգում:

Այսպիսով այս գաղափարում է կօշկակարութիւնը: Պահանջ կայ, այդ պատճառով ու փող ունի լայնացնում է իր գործը, ընդարձակում է արհեստանոցը, մէկի տեղ երկու, երեք, տասը մարդ է բանեցնում, պատրաստի ապարանք է պահում, արտասահմանի չէնք է բերել տալիս ևս այդպիսով դէպի ինքը գրաւում սպառողներին: Անփող կօշկակարը այդ բոլորը չէ կարողանում անել, մարդիկ չէ կարողանում պահել, այդ պատճառով զրկված է միւսում սպառողներից:

Մէկ-երկու տարի ապարդիւն մրցում, ոչ-մերի լարում ևս այնուհետեւ միայն բարեւանկալ աշխատանք: Մեր փոքրիկ քաղաքում շատ օրինակներ կան, որոնք ենթակայ են դարձած այս մրցմանը:—Առաջներում սովորական էր անային կտրով հագնվել: Այժմ այդ բանը հազուադէպ երեկոյների շարքում է անցել: Մինչեւ անգամ չունեւորներն էլ աւսով են համարում իրանց կնոջ կամ աղջկայ կոպիտ և ոչ այնքան գեղեցիկ ու նուրբ կտրով բաւականանալ: Հասարակական ճաշակը զարգացել է. գեղեցիկ, սիրուն հագնվելու, գրաւիչ երեւալու զգացմունքը ընդհանրացել է. 50 գինէր, որ ճաշակով հագնվելը որքան է նպաստում գեղեցկութեան: Ինչու, ուրեմն, խնայել: Գեղեցիկ չոր ունենալու ցանկութիւնը



տալարատիկ լուկ է վաղուց: Կորոնելիս մեկ-մանդիկ է դարձել:

Լուկ էր և Մաշտէտ: Վերջին տարիները նա շատ քիչ բան էր գործում և ևս չէր քիչ տպուկ: Գուցէ փոխվելին ժամանակները կամ իրան, գորդի մէջ կատարվէր որոշ էվոլյուցիա, և նա նորից կանգնէր գաղափարի համար մարտնչ-չողների շարքերում, բայց այժմ նա այդ շարքերից դուրս էր և մասը վրա հասաւ նրան, երբ նա կանգնած էր դուրս որոշ ճամբարա-ժանի առաջ:

Հանգուցեալը ծնվել էր 1852 թին: Հօր կողմից նա ծագում էր մի անգլիացուց, որ զինուորական ծառայութեան մէջ էր մտել Շվեդիայում և գերի էր ընկել ռուսաց ձեռքը Պոլտավայի պատերազմի ժամանակ, իսկ մօր կողմից նա ազգակից էր լեհական մանր ազ-նուականութեան: Իր մանկութիւնը և պա-տանկութիւնը անցնելով հարաւային Ռուսաստանում և այնտեղ կրթվելով, Գրիգորի Մաշտէտ տողոված էր բուն համակրու-թեամբ դէպի ամեն ինչ, որ մայրօրսեական է, և համարում էր իրան մայրօրս:

Հանգուցեալը շատ շուտ հանդիպեց փշերի իր կեանքի ճանապարհին: Կամենց-Պո-գոլսկի գիմնազիայից նրան հեռացրին «Ձերնիշեւսկու» գաղափարներով յափշտակ-վելու համար: Սակայն նա չը յուսահատուցեց և 1870 թին ընդունվելու բռնեց ու իրաւունք ստացաւ գաւառական ուսուցիչ լինելու: Մօգիլովում և Կամենց-Պոգոլսկում երկու տարի ուսուցչութիւն անելուց յետոյ 1872 թ. նա գնաց Ամերիկա, ուր մնաց եր-կու տարի, հաց վաճառելով իր գիւղական մշակ: Արտասահմանից վերադառնալով նա սկսեց պատկերներ և պատմութեան գրքեր Ամերիկայի և Գերմանիայի կեանքից: Բայց նրան նոր հարուած էր սպասում: 1876 թին նա ձերբակալվեց և աքսորվեց առաջ Ար-խանգելսկ, յետոյ Սիբիր, որտեղից վերադար-ձաւ միայն 1884 թին:

Սօթնասանական թւերի վերջերին և ութ-սունական թւերին Մաշտէտ յաճախ պատկեր-ներ ու պատմութեան էր տպում «Отеч. За-писки», «Недѣля», «Рус. Мысль», «Сѣв. Вѣстникъ», Русскія Вѣдомости» և ուրիշ ա-ռաջադիմական թերթերում: Այդ գրութեան-ր յետոյ դուրս եկան և առանձին ժողովա-ծունեքով, որոնք մի ժամանակ շատ ժողո-վրդական էին:

Այդ գրութեան ընտրութեան համար շատ հետաքրքրական է իր, Մաշտէտի հետեւեալ խօսքերը: «Վիպագորը ոչ թէ պէտք է տայ կենդանագիրներ, որոնց ամբողջ գալլէրէյա ունենք մենք արդէն, այլ պէտք է զարթոն-տրամադրութիւններ»:

Եւ նա զարթոնում էր տրամադրութիւններ, լաւ, համակրելի տրամադրութիւններ, և թող օրհնված լինի նրա յիշատակը այդ տրամադրու-թիւնների համար: S. Յ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Օգոստոսի 15-ին

Ներկայ ամսի սկզբին Նոր-Բայազէտ այ-

դառնում է պահանջ, իսկ այս պահանջի հե-տեւանքն է լինում փող ունեցող եւրօպական գերձակների արհեստանոցների ընդարձակումը: Գրաւում են պատուիրողների խմբեր, մօղայից յետ չը մնացող Գրանտների լէգեօններ ի վը-նա նրանց, որոնք փողի պակասութեան պատճառով չեն կարողանում յիշած անտեսա-կան մրցմանը դիմանալ ու թողնելով իրանց խանութը՝ մտնում մեծ արհեստանոցները:

Շեղ կա-կարասիքը մեծ պահանջ կայ:—ընդարձակում են ատաղձագործական արհես-տանոցները և իրանց մէջ ընդունում դատար-կաձեռն արհեստաւորներ: Հօյակապ չէնքեր կառուցանելու, մաքուր, կանոնաւոր բնակա-րան ունենալու պահանջը օրէցօր զգալի է դառնում: Զարգանում է չինարարական գոր-ծը, դրա հետ միասին առաջ են գալիս կապա-լառու չինարարներ և «մալեարներ», որոնք և իրանց ձեռքի տակ բանեցնում են անփող, սեփական հաշուով կապալ վերցնելու կարողու-թիւնից զուրկ արհեստաւորներին: Այսպիսով տեսնում ենք թէ ինչպէս քաղաքակրթութեան հետ զարգանում են մի շարք արհեստներ: Եւ-րօպական կոչակարարներ և գերձակու-թիւն, ատաղձագործութիւն, հիւանդութիւն և այլն, թէ ինչպէս քաղաքակրթութիւնը պա-հանջ է յարուցանում և թէ ինչպէս այդ պա-հանջը մրցման մէջ զննելով մի և նոյն վի-ճակն ունեցող արհեստաւորներին՝ բաժանում է նրանց երկու տարբեր վիճակի՝ մէկին զարձնելով

ցեղեց Երեւանի նահանգապետ կուս Տիգէն-հատգէն: Կայարանի մօտ պ. նահանգա-պետին դիմաւորեցին քաղաքային վարչութեան նորընտիր ձայնաւորները, զուրկ ունենալով ստարօստա պ. Յ. Մամիկոնեանցին, և բաւա-կան թուով ժողովուրդ: Հանգստանալուց և ևս ճանչելուց յետոյ, պ. նահանգապետը անձամբ գնաց նայելու քաղաքային վարչութիւնը, քն-նեց նախահաշիւը և նորերս կայացած քաղա-քային ստարօստայի ընտրութեան թերթը, ա-պա տեղական պօլիցիան, զինուորագրական ատեանը և այլ կառավարչական հիմնարկու-թիւնները և նոր կառուցվող աղբիւրների գիծը ու ջրամբարը «Պաշկեր» թաղաքում, որտեղից բղիւղւում է Նոր-Բայազէտի «անմահա-կան» ջուրը:

Տեղական հասարակութեան և գիւղացիների կողմից զանազան խնդիրներ տրվեցին բերա-նացի և գրաւոր Գլխաւոր խնդիրը կայանում է նրանում, որ ինչպէս յայտնի է, Նոր-Բայա-զէտի հողերը, որ 70 տարի է ինչ քաղաքա-պատկան էին համարվում, այժմ վիճելի են դառնում կառավարութեան կողմից և ճանաչ-վում են իբրեւ արքունի հողեր: Ահա այդ վի-ճելի հողերի համար էին խնդրում քաղաքացի-ները, որպէս զի, գիշանելով հասարակութեան խնդիրներ, հողերը վերադարձնվեց քաղաքին, քանի որ վերջինս, իբրեւ զուտ հողագործական քաղաք, անկարող է իր գոյութիւնը պահպա-նել առանց այն հողերի, որոնք իր սե-փականութիւնը չեն կազմի թէ ինչով կը վը-րանայ մեր այդ վիճելի հողային հարցը, որի մասին արդէն քաղաքը բողոք է ներկայացրել թէ կառավարիչ սենատին, թէ երկրագործա-կան միջնորդին և թէ պ. կառավարչապետին, —այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան: Առայժմ կամենք միայն, որ թէ ևս այդ վիճելի հո-ղերի վրա դրված հարկը (աւելի քան 6,000 ռուբլի) արդէն հաւաքվում է հասարակութիւ-նից, բայց և այնպէս յոյս կայ, որ վաղեմի արտօնութիւնների և գրաւոր փաստերի հի-ման վրա, հողերը վերադարձնվեն քաղաքին՝ իբրեւ նրա սեփականութիւն: Այդ մասին ինքը պ. նահանգապետը յայտնեց, որ անցելով մայի-սին երկրագործական պ. միջնորդի հետ տես-վելով, ինքը անձամբ միջնորդել է և խնդրել, որ գործը վճռեն յօգուտ մեր աղքատիկ քա-ղաքի, այսինքն աւելի քան 10,000 դեսետին հող, անհնարվ ուսուց գաղթականների յաւա-կացրած բաժինը և արքունական (կօպաների) մի կտոր քաղաքաւորի հետ, որոնք հաշւած են քաղաքի հողերի վրա:—Թողնել քաղաքին Այդ առիթով հասարակութիւնը իր խորին չնորհակալութիւնը յայտնեց պ. նահանգա-պետին:

Ժողովրդի կողմից բերանացի խնդիր արեցին նաեւ այն մասին, որ քաղաքում աղբիւրներ կառուցվելով, ջուրը հասնում է միջնեւ քա-ղաքային այգին, միջնեւ «Կալերի» թաղա-կանները, մօտ 400 տուն, բոլորովին զուրկ լինելով առողջարար ջրերից, դատապարտված են դարձնալ իր կար ժամանակով մնալու ա-ռանց ջրերի (քանի որ այդ թաղականների մա-սին հող չէ տարվել) և ստիպված են գործ ածել բորբոսնած հողերի աղի ջուրը, որը ան-գործ առէր, միւսին բանւոր, մեր քաղա-քում ներկայումս, առաւել քան երբ և իցէ, այդ գործողութիւնն է կատարվում:

Պօսելով այն արհեստների մասին, որոնց զարգացումը կապված է կուլտուրայի զարգաց-ման հետ՝ մենք չենք կարող կանգ չառնել նաեւ հակառակ կողմում գտնվող արհեստնե-րի և այս վերջիններիս պատճառած մի քանի չարիքների վրա: Կան արհեստներ, ուրեմն, որոնք հակադարձ յարաբերական են քաղաքա-կրթութեան և կուլտուրային: Այսինքն, որ-քան զարգանում, առաջադիմում է քաղաքա-կրթութիւնը՝ այնքան յետադիմում են այդ արհեստները: Մեր քաղաքում, ինչպէս նաեւ ամեն տեղ, կայ երկու տեսակի գերձակ՝ եւրօ-պական և ասիական: Առաջինը կարում է զլխաւորապէս վերարկու, պիլակ, սիւրճուկ, իսկ երկրորդը՝ արխալուզ, չուխա. օրովհետեւ կուլտուրայի ներս մտնելով արխալուզին և չուխային փոխարինում են վերարկուն և պի-լակը, ուրեմն և ասիական գերձակը հետզհե-տէ գրկվելով պատուիրողներից յետադիմում է: Եւրօպական գերձակի օգտին: Բացի սրանից, կայ երկու տեսակի կօչակարար—ասիական, զական բառով բաշխվի) և եւրօպական: Առաջինը զլխաւորապէս պատրաստում է քօ-չեր և զանազան կոպիտ ոտնամաններ, որոնք կուլտուրայի չնորհիւ տեղի տալով եւրօպական կօչկին՝ իրանք յետադիմում և գործածու-թիւնից դուրս են ընկնում: Եւրօպական գը-

պէտք է ոչ միայն խմելու, այլ և շոր լուա-նալու համար»...

Պ. Նահանգապետը 4—5 օր առաջ, նաւակ նստելով, Սեւանի ծովակի վրայով անցաւ դէպի Նաղեժդա ռուսաց գիւղը՝ գիտելու նոր բաց-վող ճանապարհը, որը, ձգվելով Գիւնէյեան լեռնաշղթայի լանջերով դէպի հարաւ-արեւելք, կապելու է Գանձակի գաւառը Նոր-Բայազէտի գաւառի հետ սայլի ճանապարհով, որը մինչեւ այժմ չը կար Ապա, չըջելով 4—5 օրվայ ըն-թացքում գաւառի զանազան կողմերը, պ. նա-հանգապետը դարձեալ նաւակով վերադարձաւ Նոր-Բայազէտ և միւս օրը, ամսիս 5-ին, ու-ղեւորվեց դէպի իր ամառանոցը՝ Մաղիւձոր:

Գ. Սինանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, օգոստոսի 14-ին

Ամսիս 6-ին կայացաւ բարեգործական երե-կոյթ յօգուտ երկու շունեւոր ուսանողի և քաղաքի գրադարան-ընթերցարանի: Տոմսակ-ներից ստացանք 426 ռուբլի 35 կօպէկ, նուէր —57 ռ. 20 կ., քիսկներէր, խաղերից, պօս-տից և բուֆէտից—264 ռ. 61 կ. ընդամենը—748 ռուբլի 16 կօպէկ: Մասն. դարձիւ վարձ—90 ռուբլի, պ. Տէր-Սահակեանին աֆիշի, ծը-րագրի և այլ մանր պիտոյքների համար—20 ռուբլի, երաժիշտներին (աւիական և եւրօ-պական) 28 ռուբլի, բուֆէտի, քիսկի, խաղե-րի համար 127 ռ. 53 կ. մարկաների համար տուած է 27 ռուբլի 8 կօպէկ, նուէրների հա-մար 27 ռուբլի, բնմի, կենդանի պատկերների համար բանւորներին և ծառաներին վճար—28 ռուբլի 42 կօպէկ: Մասն. գումարն է 349 ռուբլի 3 կօպէկ: Չուտ արդիւնք մնում է 399 ռուբլի 13 կօպէկ:

Յայտնում ենք մեր խորին չնորհակալու-թիւնը այն անձնուորութիւններին, որոնք ա-ջակցել են երկկողմի գործին:

Ղ. Տէր-Ղադարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցին Պետերբուրգից արդէն ճանապարհ է ընկել դէպի Կովկաս: Պ. Կառավարչապետը Թիֆլիս կը հասնի օգոստոսի 23-ին:

Թիֆլիսում տեղեկութիւն է ստացված, որ այս շաբաթվայ ընթացքում Կովկաս կը ծա-մանէ Նորին մեծութիւն Դէլլեւական թաղու-հի Օլգա Կոնստանտինովնա: Նորին Մեծու-թիւնը Մեծ-Իշխաններ Միխայիլ Նիկոլաւիչի և Գէորգի Միխայիլիչի հետ կը հասնի Բա-թում օգոստոսի 25-ին: Հէնց նոյն օրը օգոս-տափառ անձինք երկաթուղով կուղեւորվեն Բօթօմ:

Օգոստոսի 19-ին մարդատար № 5 գնացքը, որ Բագուից գալիս էր Թիֆլիս, Կարաբաղ կա-յարանում, ժամի 4 1/2-ին, խորտակվեց: Բարե-բաղդաւար մարդկային զոհին չը կան: Բէլլեւ-րից դուրս ընկան չղեկներէն, ծանրացել վազօնը և 3-րդ կարգի 2 վազօններ: Ծանրացել վազօնը փչված է: Ապրանքատար գնացքների երթեւեկութիւնը առժամանակ դադարեցրած է:

խարկների տարածումով ասիական փափախ-չին հետզհետէ վնասվում է և գրկվում պա-տուիրողներից, և այլն և այլն:

Այս դրութեան հետեւանքը լինում է այն, որ թող և անփող արհեստաւորները թողնում են իրանց արհեստը և պարապում բոլորովին ուրիշ գործերով. ցրվում են այս ու այն քա-ղաքները նոր ասպարէզի վրա փորձելու իրանց ոյժերը և գոյութեան անողող կուռւմ սոված չը մեռնելու: Իսկ փող ունեցողները մի կերպ դիմանալով վնասների՝ աշխատում են ուրիշ կերպ կարգադրել իրանց գործերը. կամ թուր-քերից, այսինքն եւրօպական իր չը գործա-ծողներից են պատուէրներ ստանում, կամ տեղափոխվում են այնպիսի երկրի, ուր քա-ղաքակրթութիւնը քիչ է ողջ գրել, ուր ա-սիական իրերի դեռ եւս մեծ կարիք է զգաց-վում:

Այսպիսով տեսնում ենք թէ ինչպէս մեր փոքրիկ քաղաքում եւրօպական քաղաքակր-թութեան պատուաւաստվելու միջոցին՝ մէկը իջ-նում է, միւսը բարձրանում, մէկը վնասվում է, միւսը օգտվում: Հնի և նորի, եւրօպակա-նի և ասիականի այս կտրական հանդիպու-մից են առաջանում այդպիսի հակադիր երե-ւոյթները: Կանցի մի ժամանակ, երկուսի ընդհարումը կանգ կառնի, ամեն մէկը կը գրա-նի իր ճանապարհը, մարդիկ կը հասկանան տիրող կեանքի պահանջը և գրաւաճանք գործ կը սկսեն: Սակայն ներկայումս՝ կեանքը

Կառավարչական շրջաններում որոշված է կարճ ժամանակից յետոյ ձեռնամուխ լինել ճշգրտութեամբ հետազոտելու և նիւթեր հաւա-քելու գործարանական արդիւնաբերութեան զարգացման վերաբերմամբ Ռուսաստանում վերջին 50 տարվայ ընթացքում կառավարու-թիւնը ի նկատի ունի ճշգրտութեամբ որոշել գործարանական բանւորների մշտական թիւը, պարզել նրանց աշխատանքի չափը և կեանքի այլ պայմանները:

Զինուորական քննչական ակադէմիայում կազմված յանձնաժողովը եկաւ այն եզրակա-ցութեան, որ առայժմ լատիններէն լեզուի դա-ստանդութիւնը չէ կարելի դուրս գցել Ֆէլդ-շէրների ուսումնարանների ծրագրից, այլ պէտք է բաւականապէս միայն այդ ծրագիրը կրճա-տելով:

Հաղորդակցութեան ճանապարհների մի-նիստերի հրամանով՝ բոլոր երկաթուղային ա-ղէտները, որոնք տեղի են ունեցել 1900 թին, պէտք է ենթարկվին մանրագնիին հետազոտու-թեան և այդ հետազոտութեան հիման վրա պէտք է մշակվին միջոցներ ապագայում ա-ղէտների առաջն առնելու համար:

Նրկաթվածաւորների Բարձրագոյն հաստատ-ված ընկերութիւնը հարց է բարձրացրել առա-ջիկայ աշնանը Պետերբուրգում երկաթվա-ճառների, գործարանաւորների և խոշոր առեւ-տրականների համաժողով կազմելու մասին: Համաժողովի գլխաւոր նպատակն է խորը-դակցել գերմանա-ռուսական առեւտրական դաշնակցութեան ան կէտի մասին, որ վերա-բերում է Գերմանիայից դէպի Ռուսաստան մետաղաւոր իրեղէններ ներմուծելուն և Ռու-սաստանից դէպի Գերմանիա չուգուն արտա-հանւելուն:

Նրկաթվածութեան միջնատրութիւնը մշակել է մի կանոնադրութիւն, որի համաձայն մտա-դրութիւն կայ հիմնել գիւղատնտեսութեան գործնական դասընթացներ՝ գիւղատնտեսա-կան հովտ բանւորներ նախապատրաստելու համար: Այդ դասընթացներում ցոյց կը տրը-վեն, թէ ինչպէս պէտք է վարել հողը գոնա-զան սրտանով գոթաններով, որ գոթանը յարմար է բանեցնել որոշ տեսակի հող մշակե-լիս և տարվայ որոշ եղանակին: ցոյց կը տըր-վեն նոյնպէս, թէ ինչպէս պէտք է ցանել, հնձել, հաւաքել դաշտերից հնձած գիւղատնտե-սական նրաւագոյն մեքենաների միջոցով: Բան-ւորներին կը սովորեն նաեւ անասնապա-հութեան և կաթնատնտեսութեան հիմնական կանոնները: Բացի սրանից, բանւորները պէտք է մանրամասնաբար ծանօթանան գիւղատնտե-սական մեքենաների կազմութեան, նրանց լայնութեւ ու նորից հաւաքելու, մեքենաների այդ մեքենաները կանոնաւորապէս բանեցնելու աշխատանքներին հետ: Մտադրութիւն կայ ըս-կզբում հիմնել միայն մի քանի դասընթաց-ներ և ապա ընդարձակելով գործը՝ բանալ դասընթացներ բոլոր երկրագործական շրջան-

չը հասկանալու, չըբռնելու պատճառով, տեղի են ունենում մի շարք չարիքներ, որոնց հե-ռացնելու համար պիտի աշխատի հասարա-կութեան ամեն մի քաղաքում անդամ: Տես-նում էք թէ ինչպէս մի տգէտ ծնող՝ երեխայի թիւից բռնած՝ տանում, յանձնում է փափախ-չուն, որպէս զի սա փափախ կարելը սովո-րեցին, մի ուրիշը՝ յանձնում է ասիական դե-րձակին, որպէս զի սա էլ չուխա, տրխալուղ կարելը սովորեցին, երրորդը յանձնում է ասիա-կան կօչակարին, որպէս զի սա էլ քօչ կա-րելը սովորեցին և այլն և այլն:

Եւ զարմանալի չէ, որ երեխաները մնում են վարպետի մօտ երկու, երեք, հինգ, վեց տարի: մնում են այդքան ևս դեռ չեն կարո-ղանում համեստ ապրուստ ձեռք բերել, օգնել ծնողներին: Հայրը պէտք է լաւ հասկանալ թէ ինչ է պահանջում տիրող կեանքը. ինչպիսի արհեստի շատ կարիք կայ: Պէտք է լաւ մտա-ծել, չափել, կշռել, խորհուրդ հարցնել և ոչ թէ պատահած արհեստաւորին յանձնել ու չարիք պատրաստել թէ իր և թէ որդու համար:

Գանձակի արհեստների մասին առ այժմ այս թուղթի տեղեկութիւնը տալով՝ ապագային և աւելի յարմար ժամանակին ենք թողնում այդ նիւթի հետ կապված մի շարք մանրա-մասնութիւնների մասին գրելը:

Սիւս. Յակոբեանց







Электротечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванковская ул.